

**ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱԿԱՔԱՐՈՋՉՈՒԹՅՈՒՆ ԱՂՐԲԵԶԱՍԱԿԱՆ  
ԱՌԱՎԱՑ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ\***

**Շուշան Ասկարյան**

Բանակի բառեր՝ մշակույթ, քարոզչություն, հակաքարոջչություն, ինֆորադաբականություն, լրատվամիջոց, տեղեկատվական դաշտ:

Աղրբեզանական հակահայկականությունը սկիզբ է առել Թուրքիայի ժայրահեղական ազգայնական քաղաքականության ազդեցությամբ՝ 1918թ. աղրբեզանական պետական միավորի ծևավորումից և 1930-ական թթ. «աղրբեզանցի» հասկացության կերտման նպատակադրումից ի վեր: Այն ինտենսիվորեն զարգացել է խորհրդային ժամանակաշրջանում (հատկապես սկսած 1960-ականներից) և մինչ օրս շարունակում է իր համակարգային ընդարձակումը: 1998-2000 թթ. Հայաստանի ներքաղաքական զարգացումները նեծապես նպաստեցին Հեյդար Ալիևի վարչակարգի կողմից հակահայկական ինֆորադաբականության հիմնական ուղղությունների ծևավորմանը և որոշ մեթոդների՝ առավելապես հակահայկական քարոզչությանը միտված տեղեկատվական զինանոցի փորձարկմանը: 2000թ. փորձարկվեց նաև տեղեկատվական հարձակման տեխնոլոգիական բաղադրիչը՝ առաջին անգամ աղրբեզանական ցանցահենների՝ հաքերների կողմից ժամանակավորապես շարքից դուրս բերվեցին հայկական մի շարք կայքեր, որոնցում շոշափվում էին Եեղասպանության և ԼՂՀ թեմաները:[1] Եուտով քարոզչական պայքարն ու տեղեկատվական փոխհաճագությունը տեղափոխվեց լրատվական դաշտ: Աղրբեզանի բոլոր զանգվածային լրատվամիջոցները՝ «պետական պատվերի ու հայրենասիրության» բարձունքներից առանձնակի ոգևորությամբ լրատվատաշտային պատերազմ սկսեցին հայկական ԶԼՍ-ների դեմ: Աղրբեզանական քարոզչապայքարը առանձնակի երանգներ ստացավ հայկական մշակույթի հակաքարոզչության համապատկերում:

Քարոզչությունը միտումնավոր ապակողմնորոշիչ կամ խարուսիկ տեղեկությունների փաթեթ է, որը լայնորեն լուսաբանում է որևէ գաղափար, քաղաքականություն կամ պատճառ: Հիմնական իմաստն այն է, որ տեղեկատվությունը միտումնավոր տարածվում է այնպես, որ իշխի ծևավորված հասարակական կարծիք՝ հօգուտ կոնկրետ իշխանությունների կողմից ստեղծված օրակարգի: Քարոզչությունը հաճախ պարունակում է կեղծ տեղեկություններ (կամ նույնիսկ ստեր), ինչպես նաև կեղծ կամ թաքնված ենթադրություններ: Քարոզչության խթանման առավել ակնհայտ պատմական օրինակ տեղի է ունեցել նացիստական Գերմանիայում, երբ ԶԼՍ-ները բազմից ներկայացրել են «հրեական հարցը», քանի որ այն եղել է ակնհայտ կենտրոնական հարց եւ ժամանակի ողջ գերմանական տպագիր նմանութ եւ ռադիութերը հեղեղված էր «հրեական հարցով»: Նացիստական կառավարությունը օգտագործել էր զանգվածային լրատվամիջոցները գերմանացիների մեծամասնությանը համոզելու և հավատալ տալու մի շատ կարեւոր հարցի, այն է՝ «ի՞նչ ենք մենք անելու մեր երկրի այսքան հրեաների հետ»: Ընդլայնված ժամանակահատվածում ԶԼՍ-ների կողմից այսպիսի շահարկող բովանդակության նյութերը և նույն կենտրոնական «խնդրի» շուրջ զանգվածային լրատվության միջոցների հետ հաղորդակցման ուղիներով ֆաշիստական կառավա-

\* Հոդվածն ընդունվել է 25.02.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնը:

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

րությունն ստեղծել է ապօրինի եւ կեղծ խնդիր, և զստ էության, իր սեփական օրակարգը: Քարոզության դաշտում շինժու և օրակարգային, ինչպես նաև հակահայկական տրամադրություններով ու հակաքարոզություններով հարուստ աղբեջանական լրատվականները շարունակում են վերոնշյալ օրինակը՝ հորիմելով ու սեփական ժողովրդին «Կերակրելով» այնպիսի կենտրոնական «խնդիրներով», որոնք ուղղված են ոչ միայն մերժին, այլև արտաքին լսարանի ապակողմնորոշմանը:

Արհասարակ, քարոզական գործողությունների նպատակը և ողջ տրամաբանությունը ենթադրում են, որ տեղեկատվական գործողություններն իրականացնող կողմը՝ մանհպույյատորը, իրականացնում է նպատակային, ռացիոնալ մշակված, սառը հաշվարկային քայլեր՝ ուղղված հակառակորդի հուզական, գիտակցական ապահնութեղոմանը, մինչդեռ սեփական հուզերի ու բնութագրիների առումով մնում է ստվերում, աչքի չի ընկնում: Այլ կերպ ասած՝ նա իրավիճակը կառավարողն է, ոչ թե՝ իրավիճակի մասը: Աղբեջանի պարագայում դրությունն այլ է. տեղեկատվական նյութերում նկատելի են ավելորդ հուզականություն, ինպուլսիվություն, և հակառակորդի՝ հայերի ենթադրվող խոցելի կողմերի ներկայացումը յուրովի սերտաճած է քարոզողի ինքնաներկայացման հետ: [2] Քարոզական հոսքը պարունակում է սեփական իրավիճակի, հատկանիշների, տրամադրությունների հնդիկատորներ՝ հայտանիշներ: Պարզ ասած՝ այդ քարոզությունը հաճախ «մատում» է ինքն իրեն:

Խորհրդային ժամանակաշրջանում ինֆորմադարձականության հիմնական բաղադրիչն էր պատմամշակութային հարթությունը. «բունիաթովյան դպրոցի»[3] պատմաբանները ծգուում էին աղբեջանականացնելու Աղբեջանի ԽՍՀ տարածքում բնակչող տարբեր էթնիկ խմբերի, հատկապես՝ հայերի պատմամշակութային ժառանգությունը՝ միաժամանակ կեղծելով բնիկ ժողովուրդների էթնոազգային պատմությունը: Այդ հիմնադրույթներն իրենց հետագա զարգացումն ապրեցին նաև ԽՍՀՄ վիլուգումից հետո՝ նորաստեղծ Աղբեջանի Հանրապետությունում:

Աղբեջանի իշխանությունների տեսանկյունն օպերատիկ կերպով տարածելու և աղբեջանամետ դիրքորոշումներ ծևավորելու համար Աղբեջանը ռազմավարական նշանակություն է տալիս նեղիաստիրույթին և մեծ ռեսուրսներ է ներդնում այս ոլորտի կայացման ու կատարելագործման համար: Մերինան այն հիմնական բաղադրիչն է, որի միջոցով ընթանում է տեղեկատվական ազդեցությունը հայկական լսարանների ուղղությամբ և ոչ միայն միջնորդավորված այլ երկրների ՉԼՍ-ով, այլև ուղղակիրեն՝ համացանցի օգնությամբ:[4]

Աղբեջանում հակահայկական ինֆորմադարձականության առավել ավանդական բաղադրիչներից է պատմամշակութային դաշտը, որն արդիականացվել է 2000 թվականից: Պատմական փաստերի խեղաթյուրման աշխատանքը հիմնականում վարում է Աղբեջանի Գիտությունների ազգային ակադեմիան՝ Պատմության, Մարդու իրավունքների և այլ ինստիտուտների հետ համատեղ:[5] Այդ հաստատությունների գործունեության հիմքում ընկած է Արցախի, Հայաստանի, հայ ժողովրդի և Աղբեջանի պատմության կեղծումը՝ «աղբեջանցի» և «Աղբեջան» տերմինների նույնականության ամրապնդման, կովկասյան աղվանների աղբեջանականացման, տարածաշրջանում և հատկապես պատմական Արցախում «թուրքերի բնիկ» և «հայերի եկվոր» լինելու հիմնավորման նպատակներով:[6] Ինչպես, օրինակ, Virtual Karabakh.az առցանց լրատվամշտցում պատմական գիտությունների դոկտոր Գասրմ Գաջիկի «Ղարաբաղի հուշարձանները» վերնագրով հեղինակած հոդվածում ասվում է. «...մինչև 19-րդ դարը Լեռնային Ղարաբաղում հայկական էթնիկական խումբ երեք գոյություն չի ունեցել:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Օգտվելով այն փաստից, որ Ղարաբաղի ավտոինքոնական(բնիկ) աղվանցիները եղել են քրիստոնյա, 19-րդ դարից սկսած այնտեղ սկսեցին տեղափոխվել բազմաթիվ հայկական ընտանիքներ: Դրա վառ պահպանվում է հայերի կողմից 1978թվ. Լեռնային Ղարաբաղի Աղերի շրջանի (Մարտակերտ) Մարտաղ գյուղում կանգնեցված հուշարձանը՝ ի պատիվ առաջին 200 ընտանիքների (հայկական ընտանիքների), որոնք 1928 թվականին հրամի Մարտաղ քաղաքից տեղափոխվել են Ղարաբաղը:[7]

Հատկապես ուշագրավ են Արևելյան Անդրկովկասի բնիկ ժողովուրդների (հայեր, դաղստանակեզու և պարսկակեզու ազգություններ) պատմամշակութային ժառանգության և տարածքների պարագաների պատմական-նախադրեցանական պատկանելության մասին հակագիտական, պատմաբաղաքական հայեցակարգի հորինումն ու տարածումը: Արցախի և առհասարակ պատմական Հայաստանի քաղաքական պատմության Կեղծումը հիմք է ծառայում ԼՂՀ հարցում աղբեցանական դիրքորոշումներն առաջ մղելու, ինչպես նաև ՀՀ-ի և ԼՂՀ-ի նկատմամբ Աղբեցանի հնարավոր ագրեսիան արդարացնելու համար:

Պատմության սրբագրման աշխատանքները կատարվում են ինչպես «տարածաշրջանում բնակվող բնիկ ժողովուրդների էթնոպազային պատմությունը նկարագրող տեքստերի Կեղծման»[8] ու Վերաշարադրման միջոցով, այնպես էլ այդ տեքստերի վկայություն հանդիսացող պատմամշակութային ժառանգության, օրինակ՝ հուշակոթողների վերացման և նորերի կառուցման ճամապարհով:[9] Ինչ վերաբերում է ժամանակակից Աղբեցանում գտնվող հայ ժողովորդի պատմամշակութային ժառանգությանը, ապա դրանք կամ ֆիզիկապես ոչնչացվում են, ինչպես 2005-2006թթ. տեղի ունեցավ Նոր Զուղայի գերեզմանատան խաչքարերի հետ, կամ էլ հրչակվում են «քրուն աղբեցանական»: Նույնիսկ ՀՀ և ԼՂՀ սահմաններում գտնվող հայկական էկեղեցիները, քրիստոնեական ու զուտ հայկական մշակույթին բնորոշ հուշարձանները վերագրվում են Կովկասյան Աղվանքի ժողովրդին՝ դրանց հետագա աղբեցանականացումը հիմնավորելու համար: Նոյն Virtual Karabakh.az առցանց թերթում «Քրիստոնեության պատմությունը Ղարաբաղում» հոդվածի մեջ նշվում է: «Այն գիտնականներն, ովքեր ուսումնասիրել են Կովկասյան Աղվանքի ճարտարապետական հուշարձանները, հայտարարել են, որ այդ հուշակոթողները իրենց բնութագրական առանձնահատկություններով և ճարտարապետական պլանավորման մեթոդաբանությամբ տարբերվում են հայկական կրոնական ճարտարապետական հուշարձաններից: Այս հուշարձանները պատմական բոլոր հաստկանիշներով պատկանում են մեր ժողովրդի ազգային մշակութային ժառանգությանը: Այդ հուշակոթողների թվին են պատկանում Ամարասի վանքը և Խոջավերի շրջանում, Գյանջասարի վանքը Աղերի շրջանում»:[10]

Աղբեցանական գիտնական-արուպագանդիստները Արցախը տեղափոխում են Աղվանք՝ այն պատմականորեն Աղվանքի գավառ համարելով, որտեղ, իր, ի սկզբանե բնակեցված աղվաններն ապրում էին դեռևս մինչև 19-րդ դարը՝ «հայերի ժամանումից» շատ արագ: Իսկ քանի որ աղվանցիների և աղբեցանցիների միջև դրվում է հավասարության նշան, ուրեմն վերջիններս դառնում են Արցախի նախարանիկները:

Աղբեցանական վերոնշյալ կայքը Ղարաբաղի մասին տեղեկություն է հաղորդում անգերեն, ռուսերեն, աղբեցաներեն, թուրքերեն և ֆրանսերեն՝ նպատակ ունենալով օտարալեզու լսարանին մատուցել «Ճշմարիտ» տեղեկատվություն: Այս առցանց լրատվամիջոցը նպաստում է ոչ միայն Ղարաբաղի, այլ նաև Երևանի մասին պատմական փաստերի խեղաթյուրված ներկայացմանը: «Երևանի ճարտարապետությունը» հոդվածի հետո առաջին իսկ ստողում ընթերցում ենք. «Աղբեցանի պատմական տարածքում, որը այժմ կոչվում է Հայաստանի Հանրապետություն, կային բազմաթիվ թեր-

## ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

դեր, բերդաքաղաքներ...»: [10] Կայքի ծևավորումը, հատկապես «Qarabağ» անվանումը ներկայացված է մահմեդական ոճով, համապատասխան մշակութային երանգներով, որպեսզի տեսողական պատկերացում ստեղծվի Դարաբաղի աղբեջանական պատկանելության մասին:

Հայերի մշակութային հիմքերի հերժման և դրանց յուրացման փորձերը համախ ուղեկցվում են իրականության ծևավորում և պարզ շրջման մեխանիզմներով, որը հաճախ ունենում է բարացի զավեշտի հասնող դրսորում: Փաստերի և իրականության այդպիսի խելահեղ շրջման օրինակ կարելի էր հանդիպել աղբեջանական առաջատար լրատվականներից մեկում՝ *bakililar.az*-ում [11] տեղակայված մի լրուսանկարում, որտեղ հայկական գրերը շրջված վիճակում ներկայացվում են որպես հին պլանական գրեր՝ Դագախի շրջանի Դաշսալախլը գյուղի եկեղեցու սալիկից: Ըստ աղբեջանական աղբյուրի՝ ներկայում հայերն այդ սալիկը փոխարինել են հայագիր քարով, այնինչ նրանց ներկայացրած պատկերի հայելային հետշրջումը ավելի քան խոսուն է. դրանք ի սկզբանե հայատար գրեր են: Կամ Աղբեջանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Իգրար Ալիկի գիտական գեղումներն այն մասին, որ «Դարաբաղի հայերը և Հյուսիսային Աղբեջանի աղբեջանցիները համարվում են, այսպես կոչված «արգանդակից եղբայրներ»: [12]

Աղբեջանական լրատվամիջոցները հերթական անգամ հայկական պատմությունը կեղծ անվանելու պահը բաց չեն թողել 2005 թվականին՝ Արցախում հայտնաբերած հին հայկական, հելլենիստական Տիգրանակերտ քաղաքի պեղման ժամանակ: Երկրի առաջատար և ամենաընթերցվող առցանց լրատվամիջոցներից *Day.az*-ը կայքի քաղաքական բաժնում տեղադրել էր «Եվս մեկ կեղծիք. հայերը փնտրում են գյուղուն չունեցող քաղաք» վերնագրով հոդված, որտեղ բացի շինծու փաստերից առ այն, որ Տիգրանակերտի տարածքը Աղդամի շրջանի Գյովուրգալա քաղաքն է, հոդվածի անանուն հեղինակը սարկագործ ներկայացնում է հայ հնագրաների գիտահետազոտական աշխատանքները՝ նրանց հեգնարար անվանելով գիտնական: Խոսելով պեղումների համար հատկացված գումարների մասին՝ Հայաստանին կցվում է «սուված» և «սովամահ» աժականները. «Սոված Հայաստանին այդ նպատակով հատկացված էր 30 մյն դրամ» [13]: ակնարկելով այն, որ «հայկական իշխանությունը սոված է թողնում իր ժողովրդին, բայց ջանք ու գումար չի խնայում հայերի կողմից «օկուպացված» աղբեջանական տարածքներում հայկական հետը (ևս չակերտներում) գտնելու համար:

Մեկ այլ աղբեջանական ազդեցիկ լրատվամիջոց *Aze.az*-ը «Հայաստանի կողմից շարունակվում են աղբեջանական մշակույթի դեմ ուսնձգությունները» վերնագրով հոդվածում առաջին պարբերությունից վստահաբար ասում է. «Այս անգամ հայ գործիչները յուրացրել են աղբեջանական ազգային գործիք բալարանը՝ աններդաշնակ կերպով անվանելով՝ դուդուկ»: [14] Այնուհետև թվական տվյալներով հեղինակը փորձում է ապացուել դուդուկի աղբեջանական ազգային հին երաժշտական գործիքը լինելու փաստը. «Բալարանի դպրոցը առաջին անգամ ստեղծվել է մեծագույն աղբեջանական կոմպոզիտոր Ռոգերիա Գաջիբեկովի նախաձեռնությամբ դեռ 1937 թվականին» [15], կամ «Նոյնինչ 11-րդ դարում «Դիվան»-ում Գ. Տերդիզին նշում է բալարանի մասին» [16], կամ «Դնչանք և բանաստեղծ Գազի Բունիանենդրինն, ապրելով 14-րդ դարում, իր ստեղծագործություններում բազմից փառաբանում էր այդ գործիքը»: [17] Այնինչ գումանան և դուդուկը հնագույն երաժշտական գործիքներ են, և դեռևս հինավորց ժամանակներից նմանատիպ նվազարաններ գոյություն ունեն Հայաստանի տարածքում, դրա մասին վկայում են Սևանում հնագիտական պեղումների ժամանակ (Ք.ա. II հազարամյակ) գտնված մի մանրաքանդակ, ինչպես նաև արծաթե ոհտոնը, ո-

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

որ հայտնաբերված է Երեքունու պեղումների ժամանակ և թվագրվում է թ.ա. V-IVդդ.: ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, Կոմպոզիտորների միության անդամ Կարինե Խուդարաշյանը այս առթիվ տալիս է թերևս ամենասպարհ պատասխանը. «Դուդուկն այնքան հին ծագում ունի, որ այն ժամանակ թուրքերը դեռևս գոյություն չունեին» : [18]

Նախկինում մշակութային ժառանգության պահպանության գործողությունները հիմնականում ուղղված էին նյութական մշակութային ժառանգության պահպանությանը, որը համարվում էր ավելի առաջնահերթ խնդիր: Վերջին տարիներին, երբ որոշակի կարգավորություն մշակութային դաշտը, ճշտվեցին մշակութային քաղաքականության ուղղությունները, ինչպես նաև ավելացավ մշակույթի ոլորտի օրենսդրական դաշտը, ճշտվեցին մշակութային քաղաքականության ուղղությունները, ինչպես նաև ավելացավ մշակույթի ոլորտի ֆինանսավորումը, հնարավորություն ընծեռվեց նաև ամբողջական ժավալով անդրադառնալու ոչ նյութական մշակութային ժառանգության խնդիրներին: Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությունը, պաշտպանությունը, զարգացումը և տարածումը այսօր դիտարկվում է մշակութային քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցական ցանկում արդեն ներառված է Հայաստանի կողմից ներկայացված չորս մշակութային արժեք՝ «Դուդուկն ու իր երաժշտությունը», «Խաչքարի արվեստ. խորհրդանությունը ու խաչքարագործությունը», «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսը, «Լավաշ. պահնդական հացի պատրաստումը, նշանակությունը և մշակութային դրսեւորումները Հայաստանում»:[19] Եվ հայկական «Քոչարի» պարը հնարավոր է համալրի վերոհիշյալ ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցական ցանկը: 2015 թվ. մայիսի 16-ին հայկական լրատվամիջոցներում հայտված այս նորությանը անտարբեր չեն մնում հարևան պետության «ազգագրագետ-քարոզիչները» և 6 օր անց աղրբեջանական Հազգության առցանց լրատվամիջոցում ի պատասխան տպագրում է Բահրամ Բատիկի հեղինակած «Հայերը խել են աղրբեջանցիներից նաև «Քոչարի» պարը» վերնագրով հոդվածը: Հակածարություն, զայրույթ ու հակաքարոզչություն պարունակող այս հոդվածում հեղինակը հայերին բնութագրում է հին հրոմեական հայտնի արտահայտության աղրբեջանական կողմին հաստուկ և իրեն հարմար ձևակի-խած տարրերակով «Եկավ, տեսավ, յուրացրեց»: Մրանով Բատիկը ցանկանում է ասել, որ ին աղրբեջանական տարածքում հայերը ընդամենը եկվորներ են: Այսուհետև ասում է, որ հանդգնորեն հայկականացնելով աղրբեջանական ազգային պարը՝ հայերը ընկում են ծիծառելի հրավիճակի մեջ. «Ինչպես հայտնի է, հայկական քարոզչությունը երկար տարիներ փորձում է անհաջող կերպով ապացուել, որ այդ ազգը Հարավային Կովկասի բնիկներից է, և իբր հայերը ապրում էին այստեղ հազարամյակներով, իսկ ին դարերում այս հողերում անգամ ունեցել են իրենց պետությունը «Մեծ Հայք», որը կարծես թե ծագում էր ծովից ծով: Իսկ աղրբեջանցիները քոչվորներ են, չունենալով իրենց սեփական տարածքները, եկվորներ են Հարավային Կովկասում: ...իսկ աղրբեջաներենից «քոչարի»-ն թարգմանաբար նշանակում է քոչվոր, թափառական: Եվ այսպես, եթե հայերը իրենց համարում են Հարավային Կովկասի բնիկ ազգ, ապա ինչպես ս իրենց մոտ հայտվեց քոչվորների պարը»:[20] Այս նույն հարցը կարելի է հակադրել. «Եթե աղրբեջանցիները իրենց համարում են հինավորց ազգ և մի տարածքում եղել են, կան ու կիմնեն, ապա ինչո՞ւ աղրբեջանական ազգային պարի թարգմանությունն է «թափառական, քոչվոր»:

«Հայերը հայտ ներկայացնելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի գրասենյակ, որպեսզի «Քոչարի»-ն - դասվի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցիչների

շարքին, այն բացատրել են այսպես. «Քոչարին տղամարդկանց հայկական հնագույն ազգային պար է: Հազարամյակներ հետո այն չի կորցրել իր արժեքը, դեռ ավելին, դարձել է հայ ժողովրդի ազգային և մշակութային ժառանգությունը: «Քոչարի»-ի ակունքները բխում են Արևմտյան Հայաստանի Կարսի և Արդվիին շրջաններից: Լինելով ազգությամբ հայկական, «Քոչարի»-ն բարացիորեն թարգմանվում է որպես «խիզախ տղամարդ»»:[21]

Հայկական մշակույթի հակաքարոզության դրսևորում կարող ենք համարել յուրաքանչյուր տարի կազմակերպվող «Եվրատեսիլ» երգի մրցույթի ժամանակ աղրբեջանական կողմի հիխորտանքները հատկապես այն ժամանակ, երբ Հայաստանը ներկայացնող արվեստագետը անմիջական առնչություն ունի Արցախի հետ: Մեր հարևան պետության առաջատար լրատվականներից [www.vesti.az](http://www.vesti.az)- ն հերթական հիստերիան ունեցավ, երբ արցախցի տաղանդավոր երգի Սիշան՝ Սիքայել Գրիգորյանը, Հայաստանը ներկայացրեց «Մամկական Եվրատեսիլում»: Հոդվածի հեղինակ Խսմայիլ Ալիկը, իր նախնիների հանցագործություններն վերագրելով Դարաբաղի հայերին, գրում է. «Միշային երեք չեն պատմի իր ցեղակիցների կողմից խոչալուում կազմակերպված ցեղասպանության մասին: Հակառակորդը կիրառում է տարատեսակ ուղղություններ մեր երկիր նկատմամբ սադրանքներ իրականացնելու համար, որոնց նպատակը աղրբեջանական օկուպացված տարածքներում տիկնիկային ռեժիմի մասին ազդարարումն է: Այս տարածքներում իրականացվել են էթնիկական զուման քաղաքականություն, սպանել են կանանց, ծերերին ու երեխաներին: Ի դեպ, երեխաների մասին: Արդեն երկու տարի է աշխարհի հայերը սադրիչ գործողությունների համար որպես գործիք օգտագործում են երեխաներին: Այս հաճելի, մաքր հոգով էակները նոյնիսկ չեն պատկերացնում, որ համարվում են քաղաքական սադրանքի մասմակիցներ»: Իսկ վերջում աղրբեջանցի լրագրողը մեղիկանիստեսումների գիտակի պաշտոնում վստահորեն հայտարարում է. «...իսկ Սիշան կշարունակի երգել: Երգել: Դահիճների բարձրագույն հովանու ներքո... »:[22]

Այսպիսով՝ աղրբեջանական առցանց լրատվամիջոցներում տեղ գտած հայկական մշակույթի հակաքարոզությանն առնչվող նյութերի ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ մեր հարևան պետությունը շարունակում է պատմությունն ու ներկան կեղծելու քարոզամեթենայի կատարելագործումը՝ պատմական փաստերը և ծշմարտությունը ներկայացնելով տեղեկատվական պատերազմի շրջանակներում, նախահարձակ ու նենազարդ լինելով նաև տեղեկատվական- քարոզական դաշտում: Եթե մեկ ամսվա կտրվածքով աղրբեջանական առցանց լրատվամիջոցներում կարելի է հանդիպել 10-15 հակահայկական քարոզական բնույթի նյութերի, ապա հայկական առցանց լրատվամիջոցները, չգրադարձելով հակատրբեջանական քարոզությամբ, հրապարակում են սակավաթիվ հակազդող նյութեր: Տեղեկատվական գործողությունները ոչ միայն իրական փաստեր և ծշմարտություն, այլև հարձակողական ոճին բնորոշ լրացուցիչ քայլեր պետք է ընդգրկեն [23], քանի որ հակառակորդ տեղյակ է, թե ինչպես կարելի է հարվածել, ինչպես ստեղծել պատմական փաստերի խառնաշփոթ և հասնել առավելագույն աղոյունքի:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Յ.Դեմոյան, «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ քարոզության և հակաբարողչության կազմակերպման և իրականացման եղանակների մասին», Եր., 2005, էջ 66
2. [http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT\\_ID=5055](http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=5055)
3. Զիա Բունիաթովը, ով Ադր. ԽՄՀ ԳԱ Մերձավոր և Միջին Արևելքի ինստիտուտի տնօրենն էր, Ադրբեջանի Կենտկոմի պատվերով ազգայնամոլական քարոզչական քաղաքականություն էր վարում, մասնավորապես, ադրբեջանցիների՝ իրեն Կովկասյան Աղվանքի հետմորումների 1930-ականներին ստեղծված տեսության վերաշրջանառման միջոցով։ Նրա նախաձեռնությանք ու հեղինակությանք էին հրատարակվում և վերահրատարակվում «պատմագրական» գրքեր, որոնցում, մասնավորապես, հայերը ներկայացվում էին որպես աղվաններ։
4. [http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/XXI%20Dar/06\\_2009.pdf](http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/XXI%20Dar/06_2009.pdf)
5. Նույն տեղում։
6. <http://www.virtualkarabakh.az/> Պամятники Карабаха. §...до XIX века армянская этническая группа в Нагорном Карабахе никогда не существовала. Пользуясь тем, что автохтонные албаны Карабаха были христианами, туда начиная с XIX века, было переселено множество армянских семей. Наглядным доказательством этого является памятник, воздвигнутый в 1978 году армянами в Нагорном Карабахе в селе Марага Агдеринского района (Мардакерт), в честь первых 200 семей (армянских семей), переселившихся в 1928 году из города Марага Ирана в Карабах.
7. [http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/XXI%20Dar/06\\_2009.pdf](http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/XXI%20Dar/06_2009.pdf)
8. Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը. Եր., 2009, էջ 29
9. <http://www.virtualkarabakh.az/> История христианства Карабаха. § Ученые, исследовавшие архитектурные памятники Кавказской Албании, заявили, что эти памятники по многим характерным особенностям и методам архитектурного планирования отличаются от армянских религиозных архитектурных памятников. Эти памятники по всем историческим признакам относятся к национальному культурному наследию нашего народа. В числе этих памятников можно назвать Амарасский монастырь в Ходжавендском районе, Гянджасарский монастырь в Агдеринском районе».
10. <http://www.virtualkarabakh.az/> Архитектура Иревана, «На исторической территории Азербайджана, ныне называемой Республикой Армения, находилось множество крепостей, городов-крепостей...»
11. <http://bakililar.az/ca/photos/dashsalahli.html> Фрагмент подлинной плиты с церкви в селении Даш Салахлы Казахского района
12. <http://forum.bakililar.az/index.php?showtopic=98051&page=2> Армяне Гарабага и азербайджанцы Северного Азербайджана являются, так сказать, единоутробными братьями.
13. <http://news.day.az/> Еще одна фальсификация: армяне ищут несуществующий город, В голодящей Армении с этой целью были выделены 30 млн. драм.
14. <http://aze.az/> Посягательства Армении на культуру Азербайджана продолжаются, «На сей раз армянские деятели присвоили себе национальный азербайджанский инструмент балабан, назвав его неблагозвучным "дудуком"».
15. <http://aze.az/> Посягательства Армении на культуру Азербайджана продолжаются, «Наджафов напомнил, что школа балабана была впервые создана по инициативе великого азербайджанского композитора Узеира Гаджибекова еще в 1937 году».
16. <http://aze.az/> Посягательства Армении на культуру Азербайджана продолжаются, Еще в XI веке в "Диване" Г.Тебризли есть упоминание о балабане.

## **ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

- 17.<http://aze.az/> Посагательства Армении на культуру Азербайджана продолжаются, Также поэт Гази Бунханенддин, живший в XIV веке, неоднократно в своих стихах прославлял этот инструмент.
18. Յնայակյան Յասմիկ «Զրույցներ իայ մշակույթի մասին (հարցազրույցների ժղովածու)». Եր., 2008, էջ 33-34:
- 19.<http://www.panorama.am/> 4 հայկական արժեք ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգություն է համարվել
- 20.<http://haqqin.az/> Армяне отняли у азербайджанцев и танец §Кочари», §Пытаясь столь наглым образом арменизировать азербайджанский народный танец, армяне ничуть не смущаются тем, насколько нелепо выглядят их претензии. Как известно, армянская пропаганда долгие годы пытается безуспешно доказать, что этот народ является автохтонным на Южном Кавказе, мол, армяне проживали здесь тысячелетиями, а в древности даже имели на этих землях свое государство §Великая Армения», которое вроде бы простирилось от моря до моря. А азербайджанцы – это кочевники, не имевшие собственной территории, пытается утверждать армагитпроп, и они пришли на Южном Кавказе. «...в переводе с азербайджанского «кочари» - это кочевник. Так что если армяне считают себя оседлым народом на Южном Кавказе, то каким же образом у них мог появиться танец кочевников?»
- 21.<http://haqqin.az/> ЮНЕСКО готовится признать Кочари армянским, ««Кочари – один из древнейших армянских народных мужских танцев. Спустя тысячелетия, он не утратил своего значения, более того, стал национальным и культурным достоянием армянского народа. «Кочари» берет свои истоки из областей Карс и Артвин Западной Армении. Являясь этнически армянским, «Кочари» дословно переводится как §храбрый мужчина», - объясняется в армянской заявке.
- 22.<http://www.vesti.az/news/319262>, Армяне используют детей и российских звезд против Азербайджана, Мише никогда не расскажут о геноциде, устроенном его соплеменниками в Ходжалы, Противник использует различные направления для осуществления провокаций в отношении нашей страны, целью которых является заявить о марионеточном режиме на оккупированных азербайджанских территориях. На этих самых территориях проводилась политика этнической чистки, зверски убивали женщин, стариков и детей. Кстати, о детях. Вот уже два года мировое армянство использует детей в качестве инструмента провокационной деятельности. Эти милые, чистые душой создания даже не подозревают, что являются участниками политической провокации.... А пока Миша будет петь. Петь под покровительством палачей...
23. [http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT\\_ID=2237](http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2237)

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Հայկական մշակույթի հակաքարոզչությունը ադրբեջանական առցանց  
լրատվամիջոցներում  
Շուշան Ասկարյան**

Հոդվածում ներկայացված է ադրբեջանական առաջատար առցանց լրատվամիջոցներում տեղ գտած հայկական մշակույթի հակաքարոզչությանն առջվող հրապարակումները,որոնց ուսումնասիրությունը թույլ է տալիս ասելու, որ ներ հարևան պետությունը շարունակում է պատմությունը և պատմական ընթացքը կեղծելու քարոզամեթենայի կատարելագործում՝ պատմական փաստերը և ճշմարտությունը ներկայացնելով տեղեկատվական պատերազմի շրջանակներում, նախահարձակ ու նենգադավ լինելով նաև տեղեկատվական-քարոզչական դաշտում:

**РЕЗЮМЕ**

**Пропаганда антиармянской культуры в азербайджанских интернет СМИ  
Шушан Аскарян**

**Ключевые слова:** культура, пропаганда, антипропаганда, информационная политика, СМИ, информационное поле

В статье исследуется пропаганда антиармянской культуры в ведущих азербайджанских онлайн СМИ, изучение которой позволяет говорить о том, что наш сосед представляет правду как часть информационной войны.

**SUMMARY**

**The propaganda of anti-Armenian culture in the Azerbaijan internet mass-Media  
Shushan Askaryan**

**Keywords:** Culture, propaganda, anti-propaganda, information policy, mass-media, information field

The article examines the publications of the propaganda of Anti-Armenian culture in the Azerbaijan's leading online media. The study enables to state that our neighboring state continues to falsify the historical evidence presenting it as a part of the information war.